ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի №1195-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-052-0094-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 18-ի №133-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Սուրեն Գուրգենի Կարապետյանի 23.06.2026 թվականի №5062-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 5-րդ թաղամասի 10-րդ փողոց, թիվ 12 հասցեում գտնվող, Սուրեն Գուրգենի Կարապետյանին (ծնված՝ 21.02.1971 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-052-0094-0007 կադաստրային ծածկագրով 0.13 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի

կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 148.31 քմ արտաքին մակերեսով ավտոտնակ-հացատունը (ներքին մակերեսը՝ 110.32+8.61=118.93 քմ, կառուցված՝ 2006 թվականին) և 5.47 քմ մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2006 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

ավտոտնակ-հացատան համար՝ 148.31x6000x0.0874=77774 (յոթանասունյոթ հազար յոթ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ.

պարիսպի համար՝ 5.47x6000x0.0874=2869 (երկու հազար ութ հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ.

ընդամենը՝ 80643 (ութսուն հազար վեց հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026GKYQAP):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովինար բնակավայր, 5-րդ թաղամաս, 10-րդ փողոց, թիվ 12 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 12
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 1196-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 3/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0502-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,008 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.04.2015 թվականի թիվ 412-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կադաստրային էլեկտրոնային քարտեզով հողամասի գործառնական նշանակությունը նշված է որպես հասարակական գործառնական նշանակության հողամաս՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Կամոյի փողոց, 1-ին փակուղի, թիվ 3/2 հասցեում գտնվող 05-003-0502-0022 կադաստրային ծածկագրով 0,008 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 12

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2026 թվականի N 1197-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՂ ՎԱՐԴԵՆԻԿ, ՄԱՐՏՈՒՆԻ-ՎԱՐԴԵՆԻՍ ՄԱՅՐՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-085-0305-0047 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման հավելվածի 29-րդ կետի 4-րդ ենթակետի և 62-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդենիկ, Մարտունի-Վարդենիս մայրուղի հասցեում գտնվող 05-085-0305-0047 կադաստրային ծածկագրով գույքը վերահասցեավորել և տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, Մարտունի-Վարդենիս մայրուղի, 8-9 կմ, թիվ 87 հողամաս հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 13
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2026 թվականի №1198-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑ, 6-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0022-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 18-ի №149-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Բարիս Հայկի Գորոյանի 03.09.2026 թվականի №7177-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Արցախի փողոց, 6-րդ նրբանցք, թիվ 20 հասցեում գտնվող, Բարիս Հայկի Գորոյանին (ծնված՝ 27.02.1955 թվականին), Անժելա Համբարձումի Գրիգորյանին (ծնված՝ 07.10.1958 թվականին), Կարեն Բարիսի Գորոյանին (ծնված՝ 22.03.1981 թվականին), Կամո Բարիսի Գորոյանին (ծնված՝ 05.01.1979

թվականին) և Անի Բարիսի Գորոյանին (ծնված՝ 18.01.1983 թվականին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-003-0022-0011 կադաստրային ծածկագրով 0.088 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 59.31 քմ արտաքին մակերեսով նկուղը (ներքին մակերեսը՝ 40.75 քմ, կառուցված՝ 2008 թվականին), 141.9 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 109.92 քմ, կառուցված՝ 2008 թվականին), 16.95 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2008 թվականին), 71.3 քմ արտաքին մակերեսով անասնաշենք-ավտոտնակը (ներքին մակերեսը՝ 55.03 քմ, կառուցված՝ 2008 թվականին) և 1.96 քմ մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2008 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   նկուղի համար՝ 59.31x10000x0.1422=84339 (ութսունչորս հազար երեք հարյուր երեսունինը) ՀՀ դրամ.

   բնակելի տան համար՝ 141.9x10000x0.1422=201782 (երկու հարյուր մեկ հազար յոթ հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ.

   բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 16.95x10000x0.1422=24103 (քսանչորս հազար հարյուր երեք) ՀՀ դրամ.

   անասնաշենք-ավտոտնակի համար՝ 71.3x10000x0.1422=101389 (հարյուր մեկ հազար երեք հարյուր ութսունինը) ՀՀ դրամ.

   պարիսպի համար՝ 1.96x10000x0.1422=2787 (երկու հազար յոթ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 414400 (չորս հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026JQUHQM):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Արցախի փողոց, 6-րդ նրբանցք, թիվ 20 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 13
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2026 թվականի N 1199-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՆԵՐ ԱԴՐԻԱՆԱ ԵՎ ՌՈՒԲԻԿ ԱԴԱՄՈՎԻ ԱԴԱՄՅԱՆՆԵՐԻՆ, ԱԴՐԻԱՆԱ ԵՎ ԱԼԻՍԱ ԱՐԱՅԻ ԱՌԱՔԵԼՅԱՆՆԵՐԻՆ, ՄԱՐԻՆԱ ԵՎ ԿԱՐԻՆԱ ՍԱՍՈՒՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐԻՆ, ԼԻԱՆԱ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹԻ ԳԱԼՍՏՅԱՆՆԵՐԻՆ, ՄԱՐԿ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՄՈՆԹԵԻ ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐԻՆ, ԺԵՆՅԱ ԵՎ ՆԱՐԵԿ ՀՈՎՍԵՓԻ ԴԱՎԹՅԱՆՆԵՐԻՆ, ԱԼԻԿ ԵՎ ՄԱՅԻՍ ԱՐԱՅԻԿԻ ԴԱՎԹՅԱՆՆԵՐԻՆ, ԱՆՈՒՇ ԵՎ ԱՆԻ ԱՐՄԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐԻՆ, ԼԻԴԱ ԵՎ ԷԼԵՆ ԳԵՎՈՐԳԻ ՍԱՖԱՐՅԱՆՆԵՐԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՁԵՂՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 171-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վերին Գետաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ներկայացրած փաստաթղթերը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վերին Գետաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաներ Ադրիանա և Ռուբիկ Ադամովի Ադամյաններին, Ադրիանա և Ալիսա Արայի Առաքելյաններին, Մարինա և Կարինա Սասունի Բաղդասարյաններին, Լիանա և Արթուր Հարութի Գալստյաններին, Մարկ և Արթուր Մոնթեի Գևորգյաններին, Ժենյա և Նարեկ Հովսեփի Դավթյաններին, Ալիկ և Մայիս Արայիկի Դավթյաններին, Անուշ և Անի Արմենի Հարությունյաններին, Լիդա և Էլեն Գևորգի Սաֆարյաններին տրամադրել ծնողական վարձավճարի 50%

զեղչ՝ հաշվի առնելով, որ նույն ընտանիքից մանկապարտեզ են հաճախում երկու երեխաներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 13
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2026 թվականի №1200-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-052-0048-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 18-ի №133-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Մեսրոբ Սոլոմոնի Սարգսյանի 23.06.2026 թվականի №5061-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 3-րդ թաղամասի 10-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող, Մեսրոբ Սոլոմոնի Սարգսյանին (ծնված՝ 06.08.1969 թվականին) և Սիլվա

Վազգենի Մխոյանին (ծնված՝ 06.07.1969 թվականին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 05-052-0048-0001 կադաստրային ծածկագրով 0.1007 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 23.1 քմ արտաքին մակերեսով բնակելի տան նկուղային հարկը (ներքին մակերեսը՝ 12.4 քմ, կառուցված՝ 1954 թվականին), 6.3 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 5.3 քմ, կառուցված՝ 2008 թվականին), 0.8 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2008 թվականին), 115.8 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 85.8 քմ, կառուցված՝ 2013 թվականին), 10.8 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2013 թվականին), 63.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերեսը՝ 51.6 քմ, կառուցված՝ 2019 թվականին), 6.5 քմ արտաքին մակերեսով ծածկը (ներքին մակերեսը՝ 5.5 քմ, կառուցված՝ 2020 թվականին) և 3.7 քմ ընդհանուր մակերեսով պարիսպները (կառուցված՝ 2019 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   բնակելի տան համար՝ 6.3x10000x0.0874=5506 (հինգ հազար հինգ հարյուր վեց) ՀՀ դրամ.

   բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 0.8x10000x0.0874=699 (վեց հարյուր իննսունինը) ՀՀ դրամ.

   բնակելի տան համար՝ 115.8x10000x0.0874=101210 (հարյուր մեկ հազար երկու հարյուր տասը) ՀՀ դրամ.

   բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 10.8x10000x0.0874=9439 (ինը հազար չորս հարյուր երեսունինը) ՀՀ դրամ.

   ավտոտնակի համար՝ 63.4x6000x0.0874=33247 (երեսուներեք հազար երկու հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ.

   ծածկի համար՝ 6.5x6000x0.0874=3409 (երեք հազար չորս հարյուր ինը) ՀՀ դրամ.

   պարիսպների համար՝ 3.7x6000x0.0874=1940 (հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 155450 (հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

3. Նկատի ունենալով, որ 12.4 քմ ներքին մակերեսով բնակելի տան նկուղային հարկը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ օրինականացման համար վճար չգանձել:
4. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
5. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 20237Q7SSU):
6. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.0007 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.1007 հա, գրանցված մակերեսը՝ 0.1 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:

7. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
8. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովինար բնակավայր, 3-րդ թաղամաս, 10-րդ փողոց, թիվ 1 հասցեն:
9. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 13
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2026 թվականի №1201-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 18-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-052-0091-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 18-ի №133-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Սամվել Հովհաննեսի Մկրտչյանի 30.07.2026 թվականի №6167-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 5-րդ թաղամասի 18-րդ փողոց, թիվ 8 հասցեում գտնվող, Սամվել Հովհաննեսի Մկրտչյանին (ծնված՝ 20.01.1965 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-052-0091-0005 կադաստրային

ծածկագրով 0.242 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 51.24 քմ արտաքին մակերեսով նկուղը (ներքին մակերեսը՝ 35.98 քմ, կառուցված՝ 2007 թվականին), 108.0 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 83.01 քմ, կառուցված՝ 2007 թվականին) և 5.46 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2007 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   նկուղի համար՝ 51.24x10000x0.0874=44784 (քառասունչորս հազար յոթ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ.

   բնակելի տան համար՝ 108.0x10000x0.0874=94392 (իննսունչորս հազար երեք հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ.

   բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 5.46x10000x0.0874=4772 (չորս հազար յոթ հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 143948 (հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր քառասունութ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026FVYYMW):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովինար բնակավայր, 5-րդ թաղամաս, 18-րդ փողոց, թիվ 8 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 13
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2026 թվականի N 1202-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՐԴԵՆԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՆԵՐ ԱԼԵՔՍ ԵՎ ՄՈՆԹԵ ՎԱՀԵԻ ՊՈՂՈՍՅԱՆՆԵՐԻՆ, ԱՆԳԵԼԻՆԱ ԵՎ ԷԴԳԱՐ ԱՐԹՈՒՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆՆԵՐԻՆ, ՄԱՐԿ ԵՎ ՎԱՀԱՆ ԱՐԹՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, ԼԻՆԱ ԵՎ ՆԱՐԵԿ ՆԵՐՍԵՀԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻՆ, ԱՐԱՅԻԿ ԵՎ ՄԻԼԱ ՆԱՐԵԿԻ ԲԱԴԱԼՅԱՆՆԵՐԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՁԵՂՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 171-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վարդենիկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ներկայացրած փաստաթղթերը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վարդենիկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաներ Ալեքս և Մոնթե Վահեի Պողոսյաններին, Անգելինա և Էդգար Արթուրի Առաքելյաններին, Մարկ և Վահան Արթուրի Սահակյաններին, Լինա և Նարեկ Ներսեհի Գրիգորյաններին, Արայիկ և Միլա Նարեկի Բադալյաններին տրամադրել ծնողական վարձավճարի 50% զեղչ՝ հաշվի առնելով, որ նույն ընտանիքից մանկապարտեզ են հաճախում երկու երեխաներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 13
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2026 թվականի N 1203-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 1139-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Արծվանիստ բնակավայր, 7-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 11 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Մխիթար Գաբրիելի Թովմասյանի, Ծաղիկ Սարոյի Թովմասյանի և Կարեն Մխիթարի Թովմասյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 1139-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

   1) որոշման նկարագրական մասի «հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի» բառերից և թվերից հետո լրացնել «,64-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերով և թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 13
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1204-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-034-0381-0360, 05-034-0401-0011, 05-039-0979-0005 ԵՎ 05-034-0373-0138 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Զոլաքար բնակավայրի բնակիչներ Մանվել Լևոնի Ադամյանի և Շուշանիկ Գումեդինի Ադամյանի՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերից (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական №24092026-05-0006, տրված՝ 2006 թվականի դեկտեմբերի 30-ին, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական №23092026-05-0012, տրված՝ 2007 թվականի փետրվարի 21-ին, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական №17092026-05-0056, տրված՝ 2006 թվականի դեկտեմբերի 30-ին և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական №17092026-05-0088, տրված՝ 2006 թվականի դեկտեմբերի 30-ին) հրաժարվելու մասին դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մանվել Լևոնի Ադամյանին (ծնված՝ 08.10.1969 թվականին) և Շուշանիկ Գումեդինի Ադամյանին (ծնված՝ 25.10.1971 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-034-0381-0360 կադաստրային ծածկագրով 0,15 հա մակերեսով, 05-034-0401-0011 կադաստրային ծածկագրով 0,145 հա մակերեսով, 05-039-0979-0005 կադաստրային ծածկագրով 0,073 հա մակերեսով խոտհարքերը և 05-034-0373-0138 կադաստրային ծածկագրով 0,16 հա մակերեսով վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:

3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարին՝ հողամասերի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի վկայականները ստանալուց հետո համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:
4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ հողամասերն ընդունել Մարտունի համայնքի հողային հաշվեկշիռ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1205-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՆԵՐՔԻՆ ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ՀԱՄԼԵՏԻ ԹԱԹՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով, նկատի ունենալով, որ ընդհանուր հողամասի հատկացված չափից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասը գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 48-րդ կետը և Աշոտ Համլետի Թաթոյանի լիազոր անձ Համլետ Գեղևոնի Թաթոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 2-րդ փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 7 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Աշոտ Համլետի Թաթոյանի (ծնված՝ 12.08.1971 թվականին) շինությունների և սպասարկման համար անհրաժեշտ 05-066-0098-0019 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0,12 հա մակերեսով հողամասի և դրա վրա օրինական կառուցված 120.93 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 2000 թվականին), 126.66 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 2000 թվականին), 50.94 քմ մակերեսով ձեղնահարկի (կառուցված՝ 2000 թվականին), 10.54 քմ մակերեսով բաց պատշգամբի (կառուցված՝ 2000 թվականին), 38.59 քմ մակերեսով ավտոտնակի (կառուցված՝ 2000 թվականին), 38.06 քմ մակերեսով մառանի (կառուցված՝ 2000 թվականին) և 22.32 քմ մակերեսով պարիսպի (կառուցված՝ 2000 թվականին) սեփականության իրավունքը (տնամերձ հողամասի հատկացումը 0,10 հա, փաստացի օգտագործում է 0,12 հա):
2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 2-րդ փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 7 բնակելի տուն հասցեն:
4. Ընդհանուր հողամասի հատկացման չափից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0,02 հա մակերեսով հողամասը ճանաչել որոշման 1-ին կետում նշված անձի սեփականությունը:
5. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1206-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ 05-003-0509-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի 05-003-0509-0011 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Պ.Պռոշյան փողոց, թիվ 2/42 շինություն հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի №1207-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 33-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-084-0051-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Ռազմիկ Վոլոդյայի Մկրտչյանի 03.09.2026 թվականի №7168-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրի 33-րդ փողոց, թիվ 2 հասցեում գտնվող, Ռազմիկ Վոլոդյայի Մկրտչյանին (ծնված՝ 14.09.1973 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-084-0051-0001 կադաստրային ծածկագրով 0.0828 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի

վրա ինքնակամ կառուցված 85.47 քմ արտաքին մակերեսով անասնաշենք-հացատունը (ներքին մակերեսը՝ 63.53 քմ, կառուցված՝ 2011 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝ 85.47x6000x0.1028=52718 (հիսուներկու հազար յոթ հարյուր տասնութ) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026ZSFVT6):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդաձոր բնակավայր, 33-րդ փողոց, թիվ 2 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի №1208-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0478-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 18-ի №149-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Վալերի Ռուբենի Ղազարյանի 17.08.2026 թվականի №6708-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մ. Հերացու փողոց, թիվ 34 հասցեում գտնվող, Վալերի Ռուբենի Ղազարյանին (ծնված՝ 15.08.1961 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-003-0478-0001 կադաստրային ծածկագրով 0.04725

հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 5.57 քմ արտաքին մակերեսով սանհանգույցը (ներքին մակերեսը՝ 3.31 քմ, կառուցված՝ 2013 թվականին) և 18.71+15.22=33.93 քմ ընդհանուր մակերեսով պարիսպները (կառուցված՝ 2015 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   սանհանգույցի համար՝ 5.57x10000x0.1673=9319 (ինը հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամ.

   պարիսպների համար՝ 33.93x10000x0.1673=56765 (հիսունվեց հազար յոթ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 66084 (վաթսունվեց հազար ութսունչորս) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026DMHF3Q):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Մ. Հերացու փողոց, թիվ 34 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1209-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 844-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի 05-013-0224-0001 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին համապատասխանեցնելու, Աստղաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 13-ի թիվ 28-Ա և 2020 թվականի մայիսի 27-ի թիվ 30-Ա որոշումները չեղյալ համարելու մասին» N 844-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 3-րդ կետի «571,0 քմ» թիվը փոխարինել «291,88 քմ ներքին և 347,57 քմ արտաքին» բառերով և թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի №1210-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-033-0109-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 18-ի №133-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Զարիկ Արմենակի Ներսիսյանի 22.06.2026 թվականի №5029-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 4 հասցեում գտնվող, Գեղեցիկ Միսակի Ներսիսյանին (ծնված՝ 03.06.1982 թվականին), Վարսենիկ Միսակի Ներսիսյանին (ծնված՝ 07.09.1983 թվականին), Զարիկ Արմենակի

Ներսիսյանին (ծնված՝ 30.10.1958 թվականին) և Տոլուխան Միսակի Ներսիսյանին (ծնված՝ 26.01.1979 թվականին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 05-033-0109-0008 կադաստրային ծածկագրով 0.16268 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 31.8 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը (ներքին մակերեսը՝ 20.2 քմ, կառուցված՝ 2006 թվականին), 11.7 քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2006 թվականին), 128.8 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկը (ներքին մակերեսը՝ 110.0 քմ, կառուցված՝ 2006 թվականին), 14.1 քմ մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2006 թվականին), 50.4 քմ արտաքին մակերեսով անասնագոմը (ներքին մակերեսը՝ 37.1 քմ, կառուցված՝ 2006 թվականին), 38.0 քմ արտաքին մակերեսով խոտանոցը (ներքին մակերեսը՝ 32.5 քմ, կառուցված՝ 2006 թվականին) և 18.3 քմ արտաքին մակերեսով ցախանոցը (ներքին մակերեսը՝ 16.8 քմ, կառուցված՝ 2006 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   բնակելի տան 1-ին հարկի համար՝ 31.8x10000x0.1209=38446 (երեսունութ հազար չորս հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ.

   բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 11.7x10000x0.1209=14145 (տասնչորս հազար հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ.

   բնակելի տան 2-րդ հարկի համար՝ 128.8x10000x0.1209=155719 (հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր տասնինը) ՀՀ դրամ.

   բնակելի տան 2-րդ հարկի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 14.1x10000x0.1209=17047 (տասնյոթ հազար քառասունյոթ) ՀՀ դրամ.

   անասնագոմի համար՝ 50.4x6000x0.1209=36560 (երեսունվեց հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ.

   խոտանոցի համար՝ 38.0x6000x0.1209=27565 (քսանյոթ հազար հինգ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ.

   ցախանոցի համար՝ 18.3x6000x0.1209=13275 (տասներեք հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 302757 (երեք հարյուր երկու հազար յոթ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 20268TUJXK):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 4 հասցեն:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ՇԱՀԻՆՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2026 թվականի N 1211-Ա

«ԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐՏՅՈՒՇԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՑ ՄԻՆՉԵՎ 18-Ի ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 24/10 ՀԱՍՑԵԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԻՄ ԱՌՈՂՋ ՄԱՅՐԻԿԸ» ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՇԱՐԺԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Աննա Սահակյան Արտյուշի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հոկտեմբերի 14-ի N 8230-S)՝ ***որոշում եմ.***

